

լերի խօսքերով է պատմած. տեղ տեղ ուրիշ է նւթի դասաւորութիւնը, որը լարմարեցրած է պատմողական գրածքների համար: Հարց կարող է լինել, թէ ինչ հարկ կար տալ Շիւլլերի «Որլէանի Կոլտ»-ի պատմութիւնը, քանի որ ունենք բնագրի թարգմանութիւնը: Մեզ թւում է, որ այս գիրքը անկարող լինելով փոխարինել բնագրի թարգմանութիւնը, աւելուստեղ նախ իւր նշանակութիւնը: Բնագրի թարգմանութեան դրամատիքական ձևը, ոտանաւորով

գրւած լինելը, թանկ գինը կարող են արգելել նորա տարածման որոշ խաւերում, ուր աղատ կարող է մուտք գործել վ. Ոստրոգորսկու պատմածքը:

Գիրքը կտրղացւում է հետաքրութեամբ. մի պակասութիւն, որ չառուկ է թէ իսկական «Որլէանի Կոլտ» ին և թէ այս պատմածքին, զաւելն է, որ հերոսահուն սրւած է գերբնական բնաւորութիւն:

B.

ԿՈՒՆԻԿՈՎԱ. — «Շնիկ. Ս. Պետերբուրգի Ֆրեօբելեան Ընկերութեան հրատարակութիւն. թարգմ. օր. Աննա Սահակեանց, հրատ. Թիֆլ. Ընկ. հայ. գրք. հրատարակութեան № 40, տպ. «Արսր», 28 եր. զինն է 5 կոպէկ:

Մենք ունենք բաւականի մանկական գրքեր, բայց շատ քիչ աւելիսիններից, որ լարմար լինեն 8—10 տարեկան մանուկների համար: Այս վերջին տեսակիցն է Կոնլիկովի «Շնիկը», որը արժանապա է Պետերբ. Ֆրեօբելեան ընկ. մրցանակին:

Հայերէնը ճիշդ թարգմանութիւն է ռուսերէնից, փոփոխւած են միայն անունները: Գրքովի բովանդակութիւնը հետեւեալն է. ամառանոցում ապրում է Սկանդարեանը իւր ընտանիքով. Սկանդարեանը ունի մի փոքրիկ տղա, Լեոն անունով. Լեոնը ամբողջ օրը վազվզում է, խաղում է, ձուկ է որսում, նա ունի նետ ու աղեղ և ուրիշ խաղալիքներ. բայց նա չի բաւականանում այդ բոլորով:

Մի օր նա տեսնում է իրանց լապտարի աղջկա, փոքրիկ Անթառամի ձուին մի փոքրիկ չուն. չնկը դուր է գալիս Լեոնին. Լեոնը պահանջում է. Անթառամը չի համաձայնում. Լեոնը իւր դպնակի միջոցով առնում է Անթառամի մօրից չնիկը և փոխարէնը տալիս 20 կոպէկ: Միւս օրը Լեոնի հայրը պատահում է Անթառամին իրանց տան մօտ, երբ նա եկել էր տեսնելու չնիկին, խմանում է Անթառամի վիշտը, գալիս է տուն, վերցնում է Լեոնի նետ ու աղեղը, փողով լի արկղիկը և գորա փոխարէն տալիս է նրան մի 20 կ. դրամ և պատրաստում է ալգ բոլորը ընծալիլ իրանց բարեկամի երեխաներին:

Լևոնը վրդովւած է. նա ասում է որ չի ուզում ծախել իւր խաղալիքները: «Դու հօ գնեցիր աղքատ աղջկանից քսան կոպէկով նորա ամենասիրելի շուճը»: Լևոնը համաձայնում է վերագարձնել շուճը:

Թէ ինչ հետաքրքրութեամբ է կարդացում գրքուկը և ո՞քան նա հասկանալի է մանուկներին, այդ վկայում է «ЧТО ЧЕТАТЬ ПРОДУ?» գիրքը. «Մենք կարգացինք այս պատմութիւնը գիւղական ուսումնարանի մի խումբ մանուկների. նրանք լսում էին մեծ հետաքրքրութեամբ և հարցերին պատասխանում էին աչքպէս.

— Ի՞նչու էին զբաղւում երեխաները:

Այս հարցին մանուկները մանրամասն պատմում էին կարթի, աղեղի, շնիկի մասին:

— Բաւականանում էր կոստիան (հալերէն թարգմանութեան մէջ

Լևոնը) իւր ուրախութիւններով:

— Ո՛չ, պատասխանեց մանուկներից մէկը. իրանը քիչ էր թւում, նա ուրիշինը ցանկացաւ:

— Ի՞նչպէս հալը պատժեց կոստիանին նորա լանդուզն վարմունքի համար:

Հալը նորա հետ վարւեց աչքպէս, ինչպէս նա վարւել էր աղջկայ հետ: Ինչ ամենից շատ ալը պարոնը դուր եկաւ, աւելացրեց զդացւած մանուկներից մէկը» (Հատ. I. երես 124):

Թարգմանութիւնը ընդհանրապէս լաւ է կատարւած. գիրքը գարգարւած է ստւերաւոր պատկերներով, որոնցից վերջին երկուսը աչք երեսնելում չեն, որտեղ պատկերների բովանդակութիւնն է: Այս օրինակ հրատարակութիւնների թուղթը պէտք է աւելի հաստ լինի:

B.